Կանանց առողջությունը և քիմիական նյութերի ազդեցությունը

ՄԵԶ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԿԱՆԱՆՑ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ՝ **ԹՈՒՆՈՒՆԱԿ ՆՅՈՒԹԵՐԻՑ ԶԵՐԾ ԱՇԽԱՐՀ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ**

Քիմիական նյութերը մեր սպառած ապրանքների մեծ մասի տարածված բաղադրիչներն են: Դրանք օգտագործվում են արտադրության փուլից սկսած, պահպանվում են արտադրանքի օգտագործման ողջ ընթացքում, և ոչնչացվելուց հետո կարող են մնալ շրջակա միջավայրում երկար ժամանակ, եթե ոչ հավերժ:



Քիմիական նյութերն ամբողջ աշխարհում հանդիպում են բառացիորեն ամենուրեք՝ մեր աշխատավայրերում (գործարաններ, գրասենյակային շենքեր, հիվանդանոցներ, գյուղատնտեսական վայրեր), դպրոցներում, տանը (էլեկտրոնիկայի, կահույքի, հագուստի, կենցաղային մաքրման և անձնական խնամքի միջոցներում և շատ այլ ապրանքներում), ինչպես նաև քաղաքային և գյուղական միջավայրերում: Մենք գտնվում ենք այն կետում, երբ այլևս չենք կարող խուսափել քիմիական նյութերից:

Հազարավոր քիմիական նյութեր հայտնի են մեր էկոհամակարգի և առողջության վրա թունավոր ազդեցություն ունենալու հատկությամբ, և հազարավոր այլ նյութեր երբեք անվտանգության փորձարկում չեն անցել: Արդեն իսկ կան տվյալներ, որոնք ցույց են տալիս բազմաթիվ թունունակության բարձր մակարդակ ունեցող քիմիական նյութերի, ինչպիսիք են կայուն օրգանական աղտոտիչները (ԿՕԱ-ներ) և էնդոկրին համակարգի գործառույթը խաթարող քիմիական նյութերը՝ էնդոկրին խաթարիչները (ԷԽ-ներ), ազդեցությունը մարդու առողջության վրա: Բացի այդ, մենք սովորաբար ենթարկվում ենք տարբեր քիմիական

նյութերի խառնուրդի ազդեցության, սակայն քիմիական նյութերի համակցված ազդեցությունների վերաբերյալ գործնականում որևէ փորձարկում չի իրականացվել, որոնք կարող են ունենալ ավելի վնասակար ազդեցություն: Կան նաև շատ սահմանափակ հետազոտություններ տարբեր սեռերի վրա դրանց ազդեցության մակարդակի վերաբերյալ: Տղամարդիկ և կանայք տարբեր սոցիալական որոշիչներ են ունենում՝ պայմանավորված տարբեր սեռային դերերով: Նրանք տարբեր կերպ են ենթարկվում թափոնների և քիմիական նյութերի ազդեցությանը և հետևանքները նույնպես լինում են տարբեր: 2015 թ.-ին Միավորված ազգերի կազմակերպության անդամ պետություններն ընդունեցին Կայուն զարգացման 2030 թվականի օրակարգը, որը ներառում է 17 կայուն զարգացման նպատակներ (ԿԶՆ-ներ), որոնք կարող են ծառայել որպես հիմք՝ բոլորի համար ավելի լավ և ավելի կայուն ապագայի հասնելու համար:

Չնայած քիմիական նյութերի և թափոնների ճիշտ կառավարման վերաբերյալ առանձին նպատակ չկա, սա կարևոր է կայուն զարգացման նպատակների մեծ մասին հասնելու համար: Սոցիալական դերերով պայմանավորված հավասարությունն առանձին նպատակ է (ԿԶՆ 5), բայց նաև նախապայման է մյուս նպատակների մեծ մասին հասնելու համար, ուստի անհրաժեշտ է դրան հասնել՝ մյուս կայուն զարգացման նպատակներին հասնելու համար: Բոլոր մարդիկ, անկախ սեռական ինքնությունից, պետք է ունենան նույն իրավունքները, պարտականությունները և հնարավորությունները՝ մասնակցելու քիմիական նյութերի և թափոնների կառավարման աշխատանքներին, ինչը կենսական նշանակություն ունի 2030 թ.-ի կայուն զարգացման նպատակների մեծ մասին հասնելու համար:

Ի՞ՆՉ ԵՆ ԿՕԱ-ՆԵՐԸ

ԿՕԱ-ները թունունակ քիմիական աղտոտիչներ են, որոնք աղտոտում են շրջակա միջավայրն ամբողջ աշխարհում: ԿՕԱ-ները կուտակվում են վայրի բնության և մարդկանց օրգանիզմների հյուսվածքներում, առաջացնում են մարդկանց մոտ հաշմանդամություններ և հիվանդություններ և խաթարում են զգայուն էկոհամակարգերը: 2002 թ.-ին աշխարհի կառավարությունների կողմից ընդունվեց «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիան՝ ԿՕԱ-ներից մարդու առողջությունը և շրջակա միջավայրը պաշտպանելու համար: Լայնորեն տարածված ԿՕԱ-ներից է ԴԴՏ-ն:

Առավել մանրամասն տեղեկատվության համար տես՝

https://ipen.org/toxic-priorities/what-are-pops.

Ի՞ՆՉ ԵՆ ԷԽ-ՆԵՐԸ

Էնդոկրին խաթարիչները սահմանվում են որպես «էկզոգեն (ոչ բնական) քիմիական նյութեր կամ քիմիական նյութերի խառնուրդներ, որոնք խաթարում են հորմոնների գործառույթը»: Հորմոնները բնական քիմիական նյութեր են, որոնք արտադրվում են էնդոկրին գեղձերի բջիջներում, որոնք տեղակայված են ամբողջ օրգանիզմում: ԷԽ-ները լայնորեն օգտագործվում են բազմաթիվ սպառողական ապրանքներում և հայտնի են առողջության վրա ծանր հետևանքներով, որոնք կարող են տարբեր լինել տարբեր սեռերի համար:

Առավել մանրամասն տեղեկատվության համար տես՝

www.ipen.org.

Կանանց ընկալունակությունը քիմիական նյութերի ազդեցության նկատմամբ և առողջության վրա դրանց ազդեցության հետևանքները տարբեր են, հիմնականում՝ իրենց ֆիզիոլոգիայի, կենսաբանական կառուցվածքի, մասնագիտական ազդեցության տեսակների, անձնական խնամքի և կենցաղային պարագաներում առկա քիմիական նյութերի ազդեցության, ինչպես նաև սոցիալական իրավիճակի պատճառով: Նրանք հատկապես խոցելի են զարգացման կարևոր փուլերում՝ արգանդում, վաղ մանկության շրջանում, պատանեկության շրջանում, հղիության, կրծքով կերակրման և դաշտանադադարի շրջանում: Ռիսկերը նույնպես տարբեր են. կենսաբանական գործոնները, մասնավորապես՝ չափսերի, ֆիզիոլոգիական, հորմոնալ և ֆերմենտային տարբերությունները կանանց և տղամարդկանց, ինչպես նաև մեծահասակների և երեխաների միջև, նույնպես ազդում են թունունակ քիմիական նյութերի ազդեցության հետևանքով առաջացող առողջական խնդիրների նկատմամբ ընկալունակության վրա: Տարբեր սերունդների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ քիմիական նյութերի բեռը կարող է ոչ միայն ազդել կանանց առողջության վրա, այլև կարող է փոխանցվել սերնդեսերունդ, երբ մայրը ենթարկվում է դրանց՝ հղիության կամ կրծքով կերակրման ընթացքում:



ԻՆՉՈՒ՞ Է ՀԱՐԿԱՎՈՐ ԽՈՍԵԼ ԿԱՆԱՆՑ ԵՎ ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ

Կանայք և տղամարդիկ՝
• ունեն տարբեր ֆիզիոլոգիական և կենսաբանական կառուցվածք,
• առերեսվում են տարբեր սոցիալական որոշիչների և ունեն տարբեր սոցիալական դերեր,
• տարբեր կերպ են ենթարկվում ազդեցությանը՝ կախված մասնագիտությունից և սոցիալական իրավիճակներից,
• տարբեր կերպ են ենթարկվում ազդեցությանը՝ զարգացման կարևորագույն փուլերում:

Մշակութային նորմերը նույնպես կարող են ազդել կանանց և աղջիկների քիմիական նյութերի նկատմամբ խոցելիության վրա: Գեղահարդարման և հիգիենայի միջոցներում օգտագործվող մոտավորապես 13,000 քիմիական նյութից միայն մոտ 10%-ն է անցել անվտանգության փորձարկում: 2017 թ.-ի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ զունավոր մաշկ ունեցող կանայք, անկախ սոցիալ-տնտեսական կարգավիճակից, ավելի բարձր ռիսկի են ենթարկվում այնպիսի քիմիական նյութերի բարձր խտությունների ազդեցության, ինչպիսիք են մաշկը սպիտակեցնող և մազերի խնամքի միջոցները, որոնք հաճախ պարունակում են թունունակ նյութեր, այդ թվում՝ ծանր մետաղներ, ինչպիսիք են սնդիկը և կապարը:[1]

[1] Zota & Shamasunder, 2017, The environmental injustice of beauty: framing chemical exposures from beauty products as a health disparities concern, American Journal of Obstetrics & Gynecology, Vol 127(4):418

Աշխարհի բոլոր շրջաններում կատարվել են բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնք ցույց են տալիս թունաքիմիկատների մնացորդային քանակների առկայությունը գյուղատնտեսությունում աշխատող կանանց արյան մեջ, կրծքի կաթում և պորտալարի արյան մեջ:[2]

Կանայք հաճախ կարող են նույնիսկ չիմանալ, թե երբ են ենթարկվում վտանգավոր քիմիական նյութերի ազդեցությանը, հատկապես աշխատավայրում: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կանանց մոտ, որոնց աշխատանքը կապված է քաղցկեղածին նյութերի և էնդոկրին խաթարիչների բարձր խտությունների ազդեցության հետ, առկա է կրծքագեղձի քաղցկեղի առաջացման բարձր ռիսկ: Այդ աշխատանքներից են գյուղատնտեսությունը, ավտոմոբիլային արդյունաբերությունը, պլաստմասսայի արտադրությունը, սննդի պահածոյացումը և մետաղամշակումը, ընդ որում՝ նախադաշտանադադարային շրջանում կրծքագեղձի քաղցկեղի առաջացման ռիսկն ամենաբարձրն է ավտոմոբիլային պլաստմասսայի և սննդի պահածոյացման ոլորտում աշխատողների մոտ:[3]

Գյուղատնտեսական ոլորտում, որտեղ բարձր վտանգավորության թունաքիմիկատների օգտագործումը տարածված է, զարգացող երկրներում աշխատանքի ավելի քան 40%-ը կատարվում է կանանց և աղջիկների կողմից:[4] Շատ դեպքերում նրանք կարող են չունենալ կրթություն և գործիքներ, որոնք անհրաժեշտ են թունաքիմիկատների վնասակար ազդեցությունից պաշտպանվելու համար: Քանի որ կանայք սովորաբար հոգ են տանում իրենց երեխաների մասին, երեխաները նույնպես կարող են տուժել թունաքիմիկատների ազդեցությունից՝ զարգացման վաղ փուլերից մինչև մանկություն, ինչը վնասակար ազդեցություն է ունենում նրանց աճի և զարգացման վրա: Կանայք նաև կազմում են տեքստիլի, էլեկտրոնիկայի և առողջապահության ոլորտներում աշխատուժի մեծ մասը և կարող են աշխատանքի ժամանակ ենթարկվել քիմիական նյութերի «կոկտեյլի» ազդեցության: Սրանք շատ քիմիական նյութերի հետ շփում պահանջող մասնագիտություններ են, որոնք օգտագործում են հազարավոր քիմիական նյութեր, որոնցից շատերը վտանգավոր են:

Շատ զարգացող երկրներում այս աշխատուժը չի ապահովվում պաշտպանիչ միջոցներով, տեղեկացված չէ այն վնասակար քիմիական նյութերի մասին, որոնց նրանք ենթարկվում են, և սովորաբար գերծանրաբեռնված են աշխատում և ավելի քիչ են վարձատրվում, քան իրենց տղամարդ գործընկերները: Կան փաստաթղթավորված դեպքեր, երբ կանայք տառապում են քաղցկեղով, վերարտադրողական խանգարումներով, բնածին անոմալիաներով և մասնագիտական ազդեցության պատճառով բազմաթիվ այլ վնասակար և նույնիսկ մահացու առողջական խնդիրներով:

2006 թ.-ին անցկացված ուսումնասիրությունը վերանայել է IBM միջազգային կորպորացիայի ավելի քան 32,000 աշխատողների գործեր՝ ավելի քան 30 տարվա ընթացքում, ուսումնասիրելով աշխատողների մահվան վերջնական պատճառը և

[2] https://ipen.org/documents/women-chemicals-and-sdgs
[3] https://ipen.org/documents/women-chemicals-and-sdgs
[4] 4 https://www.brsmeas.org/default.aspx?tabid=7965

հայտնաբերելով մի շարք քաղցկեղների և մահվան այլ պատճառներ, որոնք զգալիորեն բարձր են եղել ԱՄՆ ընդհանուր բնակչության համեմատ: Արդյունքները ցույց են տվել տղամարդ աշխատողների մոտ ուղեղի, երիկամների և ենթաստամոքսային գեղձի քաղցկեղի, ինչպես նաև մելանոմայի դեպքերի ավելացում, իսկ կին աշխատողների մոտ՝ երիկամների քաղցկեղից, լիմֆոմայից և լեյկեմիայից մահացությունների սպասվածից բարձր թվեր: Հեղինակները եզրակացրել են, որ քաղցկեղից մահացության աճը պայմանավորված է նրանով, որ IBM գործարանի աշխատողներն «ավելի հավանական է, որ ենթարկվել են լուծիչների և այլ քիմիական նյութերի ազդեցությանն արտադրական գործընթացների ժամանակ»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կանանց և քիմիական նյութերի հարցը պահանջում է ավելի մեծ գիտական և քաղաքական ուշադրություն, և պետք է հաշվի առնվեն մի քանի հիմնական գործողությունների կետեր: Նախ, շեշտը դրվում է քիմիական նյութերի կառավարման գործում կանանց հավասար մասնակցության կարևորության վրա: Երկրորդ, անհրաժեշտ է առաջնահերթություն տալ կանանց պաշտպանությանը՝ որպես քիմիական նյութերի անբարենպաստ ազդեցությունների նկատմամբ խիստ ընկալունակ խմբի: Դրան հասնելու համար պետք է ձեռնարկվեն մի շարք անհապաղ քայլեր.

1 Հանրային տիրույթում արտադրանքի քիմիական հավելումների և առողջության վրա դրանց ազդեցության վերաբերյալ տեղեկատվության մատչելիության խթանում և վտանգավոր քիմիական նյութերի ավելի անվտանգ արտադրանքով փոխարինմանն աջակցելու համար քաղաքականության և համակարգերի հետագա մշակում:

2 Քիմիական նյութերի ազդեցության վերաբերյալ սեռային և սոցիալական դերերով պայմանավորված տարանջատված տվյալների փաստաթղթավորում և մատչելիություն:

3 Քաղաքականության մշակում՝ ուղղված կանանց վրա հատկապես վնասակար ազդեցություն ունեցող վտանգավոր քիմիական նյութերի փուլային վերացմանը:

Կարևոր է, որ արտադրողները պատասխանատվություն կրեն իրենց արտադրած արտադրանքի և դրա շրջակա միջավայրի ու մարդու առողջության, մասնավորապես՝ խոցելի խմբերի վրա ազդեցության համար: Որպես սպառողներ՝ մենք պետք է իրացնենք մեր իրավունքն՝ իմանալու և պահանջելու տեղեկատվության բացահայտում և վտանգավոր քիմիական նյութերի ավելի անվտանգ այլընտրանքներով փոխարինում:

Օգոստոս, 2023թ.
Հեղինակ՝ Թրիփթի Արորա
IPEN-ի արտադրական թիմ՝ Թիֆանի Թուլ և Չարլզ Մարգուլիս
Ավելի մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել www.ipen.org կայքը: @ToxicsFree ToxicsFree IPEN Youtube